

ՆԱԽԱԳԻԾ

Հավելված

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
20 ____ թ. _____ -ի N ____-Լ հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՀՀ մարզերի գյուղական բնակավայրում առանձնատան համար հատկացված
հողամասում առանձնացված սանհանգույցի կառուցման**



1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն «ՀՀ մարզերի գյուղական բնակավայրում առանձնատան համար հատկացված հողամասում առանձնացված սանհանգույցի կառուցման» ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) աշխատանքային ձեռնարկ է, որում գետեղված են ՀՀ մարզերի գյուղական բնակավայրում առանձնատան հատկացված հողամասում առանձնացված սանհանգույցի կառուցմանը վերաբերող ՀՀ օրենսդրությանը, գործող նորմերի պահանջների և էսթետիկ կանոնների պահպանմամբ սանհանգույցի կառուցման առանձնահատկությունները:

Սանհանգույցը առանձնատնային թաղամասերում կարևոր տարր է: Ներկայումս քոթեջների և ամառանոցների ժամանակակից ձևավորումները, գլխավորապես, սանհանգույցի առկայությունը նախատեսում են տան ներսում: Բայց ամառանոցային տարածքների և գյուղական բնակավայրերի շատ սեփականատերեր նախընտրում են հողամասում առանձին սանհանգույց կառուցել:

Որպես կանոն, դա փոքր փայտե կառույց է, որոշ դեպքերում՝ աղյուսե կամ քարից: Նախքան շինարարությունը սկսելը, անհրաժեշտ է ճիշտ ընտրել սանհանգույցի ճիշտ տեղը:

Սույն ուղեցույցում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

- 1) ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- 2) ՀՀ կառավարություն 2015 թվականի մարտի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ


- 1) Ուղեցույցում տրվում են մարզերի գյուղական բնակավայրում առանձնատան համար հատկացված հողամասում առանձնացված սանհանգույցի կառուցմանը ներկայացվող պահանջները:

3. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶՈՒԳԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- 1) Զուգարանի հիմնատակի լավագույն տարբերակը աղյուսների կամ բետոնե բլոկների օգտագործումն է: Հիմքի չափերը պետք է լինեն բավականաչափ ընդարձակ, որպեսզի ապահովեն հարմարավետ օգտագործումը:
- 2) Անհրաժեշտ բաղադրիչը սանիտարական ընդունիչն է, որը կապահովի համակարգի հերմետիկությունը և կկանխի հոտերը: Որպես ընդունիչ կարող եք օգտագործել պլաստիկ կամ կերամիկական զուգարանակոնք:
- 3) Զուգարանի պատշաճ գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է օդափոխություն: Օդափոխման խողովակը կարող է սեղծել կոյուղու խողովակներից, այն անցնելով գյուղական տան տանիքից կամ կողքից:
- 4) Ցանկալի է ապահովել թափոնների կուտակման և վերամշակման հնարավորությունը: Դա անելու համար կարող է տեղադրվել կոնտեյներային համակարգ, որի մեջ զուգարանի պարունակությունը կթափվի, իսկ հետո որոշակի պայմաններում կվերամշակվի:

4. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ


- 1) Կառույցը պետք է տեղակայված լինի ջրամբարներից, խմելու և արտադրական ջրի աղբյուրներից բավականաչափ հեռավորության վրա: Գյուղական, ամառանոցային սանհանգույցը, սեպտիկ բաքը կամ հորը տեղակայվում են ջրի հորատանցքերից և ջրի այլ ինքնավար աղբյուրներից առնվազն 25-30 մետր հեռավորության վրա:
Չի թույլատրվում կառուցել սանհանգույց հողամասի սահմանագծին: Հեռավորությունը մինչև սահմանը պետք է լինի առնվազն մեկ մետր՝
- 2) Լավագույն տարբերակը կլինի հողամասի հեռավոր ծայրում տեղակայումը, խուսափելով կենտրոնական հատվածներից:
- 3) Հողամասում նիշերի տարբերությունների դեպքում պետք է ընտրել հողամասի ամենացածր կետը.
- 4) Կարևոր է, որ կեղտաջրերի հեռացման տեխնիկան (սարքավորումները) կարողանան մոտեցում ունենալ մինչև զուգարան.
- 5) Սեպտիկ բաքը տեղադրելիս հաշվի են առնվում հողի սառեցման աստիճանը և ստորերկրյա ջրերի տեղադիրքը:



Նկ.1 Սանհանգույցի հեռավորությունն այլ կառույցներից

5. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ


Տան ներսում տեղադրվում է զուգարանակոնքի հատվածը (խցիկը), իսկ շենքից դուրս գտնվող տարածքի վրա՝ կոյուղու հորը կամ սեպտիկ բաք: Գյուղական տների, քոթեջների և բաղնիքների նախագծերը մեծ մասամբ ներառում են հենց այդպիսի լուծումներ, երբ սանհանգույցները գտնվում են ներսում:



6. ՋՈՒԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԽԵՄԱ

Փոշեպաշտպան (Пудр-клозет) խցիկը չի պահանջում կոյուղու հոր: Սա պարզ և մատչելի լուծում է ամառանոցի համար, որտեղ փոսի փոխարեն օգտագործվում է տարա, որը տեղադրվում է զուգարանի տակ և պարբերաբար մաքրվում: Հոտերը վերացնելու համար զուգարանում լցնում են թեփ, խոտ կամ տորֆ:

Փոշեպաշտպան խցիկը տեղադրվում է անմիջապես կոյուղու հոր վերևում կամ այն տարայի վերևում, որտեղ կհավաքվեն թափոնները:



Նկ.2. Բակային սանհանգույցի կառուցվածք

7. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԿՈՅՈՒՂՈՒ ՀՈՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ

- 1) Կոյուղու հորի կազմակերպման համար անհրաժեշտ է պատրաստել ուղղանկյուն հիմնափոս 1,7x1,7 դասական պարամետրերով և մոտ 1,5 մետր խորությամբ: Փոսի պատերը ծածկված են գետտեքստիլներով, որոնք կպաշտպանեն փոսը խոնավությունից:




- 2) Փոսի հատակին լցվում է 10-20 սանտիմետր բարձրությամբ ավազի բարձիկ, այնուհետև պատրաստվում է նաև ցեմենտի հարթեցնող շերտ՝ նույնպես 10-20 սանտիմետր բարձրությամբ:
- 3) Բետոնի չորացումից հետո հիմքի կողանցքերը լցվում են խոշոր խճով և տոփանվում,
- 4) Հարթեցնող շերտի պարագծի երկայնքով մեկ շերտով շարվում է աղյուս կամ տեղադրվում են հիմքի բլոկներ:
- 5) Շարվածքը բարձրացվում է մինչև զրոյական մակարդակ և վրան ամրացնավորող գոտի է լցվում:
- 6) Աշխատանքի վերջում փոսի պատի և շարվածքի միջև բացակը լցվում է թաց կավով, որը լրացուցիչ ջրամեկուսացում է ապահովում:

8. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՏԱՐԱՅԻ ՎՐԱ

Այս տեսակի զուգարանի համար փոսն ավելի մեծ է կառուցվում: Այն պետք է ունենա մոտ երեք մետր երկարություն, 1,5 մետր լայնություն և 2-2,5 մետր խորություն: Հատակի վրա լցնում են ավազի բարձիկ 15 սանտիմետր բարձրությամբ և 10 սանտիմետր բարձրությամբ խիճ: Շերտերը խնամքով տոփանվում են, իսկ վրայից ծածկվում են մի քանի շերտ ռուբերոիդ, որոնք կստեղծեն ջրամեկուսացում: Ամրանավորված բետոնի հարթեցնող շերտը լցվում է ռուբերոիդի շերտի վրա:

Հարթեցնող շերտի եզրերից 20-30 սանտիմետր հեռավորության վրա պատրաստվում է ժապավենային կաղապար, որը շրջապատում է բետոնե մակերեսը պարագծի շուրջը: Կաղապարի բարձրությունը պետք է փոսի խորությունից մեկ մետր ցածր լինի: Կաղապարը ներսից ամրանավորվում է և լցվում բետոնով:



Բետոնի կարծրացումից հետո հարթեցնող շերտը հանվում է, իսկ հիմքի շերտի և փոսի պատերի միջև եղած բացակը լցվում է թաց կավով: Ժապավենի վերևում կաղապարամածը տեղադրվում է մոնոլիտ ծածկույթի տակ երկու բացվածքներով: Մեկը կօգտագործվի օդի արտածման, մյուսը՝ զուգարանակոնքի համար:

Ծածկը լցվում է և զուգարանակոնքի լուսի վերևում տեղադրվում է բետոնե օղակ, որը դուրս է ցցվում գետնից 15-20 սանտիմետր բարձրությամբ: Օղակի փոխարեն կարելի

է մեկ մետր բարձրությամբ աղյուսներ դնել, իսկ աղյուսի շարվածքի մակերևույթը ծածկել լյուկով: Ծածկի վերևում, հիմքի ժապավենաշերտի վերևում, ամրացվում են երկու աղյուսե (բետոնե բլոկից) պատեր, որոնց վրա հավաքվում է հեծաններից ցանց: Հորի պատերի և հիմքի միջև եղած դատարկ տարածությունները պատվում են բիտումով և ծածկում հողով:



9. ԿՈՅՈՒՂԱՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Կոյուղահորը բացօթյա զուգարանների մեծ մասի նախագծման անբաժանելի մասն է: Նախկինում, շատ դեպքերում, պարզապես փոս էին փորում և վերևում խցիկ տեղադրում, իսկ երբ այն լցվում էին, պարզապես ծածկում էին հողով: Մեր օրերում կոյուղահորն այլ կերպ են պատրաստվում:

Նախ, հաշվի են առնվում ստորերկրյա ջրերի խորությունը և հողի կազմը: Եթե հողը ավազոտ է, իսկ ջուրը փոքր խորության վրա է, ապա պարզապես փորված փոսը, ամենայն հավանականությամբ, երկար չի ծառայի: Առկա է պատերի քայքայման և որպես հետևանք՝ փլուզման վտանգ:



Երկրորդ, հաշվի է առնվում կոյուղահորը լցնելիս կրկին օգտագործելու հնարավորությունը: Այս դեպքում բակային զուգարանը պետք է նորից տեղադրվի այն դատարկվելուց հետո:

Բազմակի օգտագործվող կոյուղահորը պատրաստվում է՝

- Աղյուսից. Փորված փոսը շարվում է աղյուսներով, իսկ վերևում տեղադրվում է զուգարանը:

- Պլաստիկից. Որպես սեպտիկ արտադրվում են հատուկ պլաստիկ տարաներ

- Մետաղից. Որպես կանոն, սա մեծ տրամագծով խողովակ է (1,.....1,5 մ)

- Բետոնից. Երկաթբետոնե օղակները ընկղմվում են փոսի մեջ, օգտագործելով կոունկ:

Փայտե բացօթյա զուգարանի համար, որպես կանոն, բավական է 1,2 օղակ:

Եթե ստորերկրյա ջրերի մակարդակը բարձր է, ապա առկա է կոյուղահորի ողողման և կոյուղու արտահոսքի վտանգ կա: Այս դեպքում թափոնների համար օգտագործվում է պլաստիկ տարա: Դրա շուրջ կազմակերպվում է ցամաքուրդ: Այս դեպքում սանհանգույցի թափոնները պետք է պարբերաբար հեռացվեն, ինչը, անկասկած, այս տիպի սանհանգույցի թերությունն է:



10. ՓԱՅՏԵ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Փայտե սանհանգույցը հայտնի և պահանջված տարբերակ է, որն օգտագործվում է գյուղական տարածքների և տների սեփականատերերի կողմից: Գյուղական բնակավայրերում, ամառանոցներում զուգարանի հիմքը տեղադրելուց հետո կարող եք սկսել բուն օբյեկտի շինարարությունը: Դա անելու համար հիմքի վրա ամրացվում է ուղղանկյուն փայտե շրջանակ: Յուրաքանչյուր անկյունի տակ դրվում են աղյուսներ կամ բետոնե բլոկներ: Շրջանակի և ջրամեկուսացման հիմքի միջև դրվում է ռուբերոիդի շերտ:


Փայտե շրջանակը պարունակում է չորս հիմնական հենակներ (սյուներ), երկու լրացուցիչ դռան և ապագա տանիքի համար նախատեսված ճառագայթներ, որոնք տեղադրված են պարագծի շուրջ: Միաթեք տանիք պատրաստելու դեպքում առջևի սյուներն անհրաժեշտ է իրականացնել ավելի բարձր, քան հետևի սյուները: Շրջանակը

պատրաստելիս օգտագործվում են ձողեր կամ տախտակներ: Փայտը նախապես պետ է պատել գրունտով կամ այլ պաշտպանիչ միջոցներով, հակառակ դեպքում այն արագ կփչանա:

Կոյուղահորի վրա պետք է կառուցվի նստատեղը և կցվի հիմնական շրջանակին: Տանիքը տեղադրելու համար խաչաձողերի վրա տեղադրվում է ռուբերոիդի շերտ, այնուհետև դրվում է ծածկի (մետաղ, շիֆեր և այլն) շերտ: Հատակն իրականացվում է սովորական տախտակներից, պատերը կարելի է երեսապատել ծալքատախտակով, գիպասատվարաթղթով կամ այլ փայտե նյութերով: Ավարտին, ծխնիններից կախվում է դուռը:



Քնական օդափոխության ապահովման համար պետք է օգտագործել պատուհան կամ հատուկ անցք, որը գտնվում է պատերից մեկի ստորին մասում: Այն հնարավորինս մոտ պետք է լինի տանիքին կամ սարքավորվի հատուկ հովանոցով: Սա անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանվի կառուցվածքը տեղումներից, տերևների և կեղտի ներթափանցումից:



Հարկադիր օդափոխությունը. որը նաև կոչվում է արհեստական, ստեղծվում է հատուկ խողովակի կամ տուփի միջոցով, որը թարմ օդ է մատակարարում սենյակ և հեռացնում տհաճ հոտերը: Կարելի է ընտրել ցանկացած խողովակ՝ պատրաստված մետաղից կամ պլաստմասից: Դրա մի ծայրը պետք է իջեցվի անցքի մեջ, իսկ մյուսը պետք է բարձրանա տանիքից մի քանի մետր բարձրության վրա: Լավագույնն այն է, եթե խողովակը տեղադրվի շենքից դուրս: Եթե զուգարանակոնք է տեղադրված բացօթյա զուգարանում, ապա խողովակը պետք է անցնի հատակի անցքից կամ կցվի զուգարանակոնքին, իսկ եթե փոսով զուգարան է, ապա ավելի լավ է օդափոխությունը մոտեցնել դրան:




Տուփը, որն ապահովում է լավ օդափոխություն և բավականաչափ մաքուր օդ խցում, հատուկ օդափոխիչ է: Նման փոքր շինության համար անհրաժեշտ է ընտրել այն ոչ ավելի, քան 5 Վտ հզորությամբ: Օդափոխիչը տեղադրվում է խողովակի ներսում, այնպես, որ



պատման արագության համար պատասխանատու սենսորը գտնվում է խցիկի ներսում:

Նախքան զուգարան կառուցելը, անհրաժեշտ է հաշվի առնել օդափոխությունը և լուսավորությունը: Կառույցին պետք է էլեկտրաէներգիա մատակարարվի, իսկ ներսում պետք է կախված լինի լուսավորող սարք: Օրվա ընթացքում զուգարանը կարող է լուսավորվել դրան վերելում տեղադրված փոքրիկ պատուհանով:



Օդափոխումը սարքավորելու համար օգտագործվում է 100 մմ տրամագծով պլաստիկ կոյուղու խողովակ: Պողիում- նստատեղի տրամագծին համապատասխան անցք է կտրվում: Խողովակը ձգվում է դեպի զուգարանի հետևի պատը, անցքի միջով ստորին ծայրը 15 սանտիմետր ներքև իջեցվում է կոյուղահորի մեջ: Վերին ծայրը դուրս է բերվում տանիքի անցքից տանիքի մակերեսից 20 սանտիմետր բարձրությամբ: Խողովակի գլխին դրվում է դեֆլեկտորային վարդակ և ամրացվում:



10. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Սանհանգույցը դրսից, անձրևից պաշտպանվելու համար շրջանակը կարող է երեսապատված լինել ցանկացած նյութով, օրինակ՝ ծալքավոր թիթեղով: Այնուամենայնիվ, երեսպատման ամենատարածված նյութը փայտե կիսագերաններն են: Զուգարանի տանիքի համար օգտագործվում է տանիքի ցանկացած նյութ, օրինակ՝ ծալքավոր թիթեղ: Այնուամենայնիվ, քանի որ փայտը կայուն չէ տեղումների նկատմամբ, ուստի այն պետք է մշակվի հականեխիչ նյութերով:

